

Ասոխ պարսկին անկելոյ ի սև արիւն նենդաղաւ,

Դեռ քոջ Հային ի բազուկ սուսեր ցօլայր, կայր թաթաւ,

Վերջին շնչոյն առւր և առ մինչգեռ կարձեր ի կոկորդ,

Վըէժ հնչեր գոռ պարսկին, վըէժ ձայներ ի դզօրդ:

Լուռ էր համակ Եւարայր, Ըրիկ ննջեր գոգ ի քուն,

Առւսերք, նիզակք և վոհանք չգոռային ի շացիւն,

Հեղ Տղմուտին մեղմասահ ալեաց խոխոջ նորանոր

Դիւցաղնեից Հայկ սզուն կարդայր միայն գոգ օրօր:

Ենդ ծերունին հայասէր, անդ Եղիշէն քաղցրանոյշ,

Երջեր մնջիկ ծաղկածեմ, զիւր վարդն ածեր միշտ ի յուշ.

Երրե սոխակ սիրամոշ եղեալ յայդի աւերակ,

Ի սէր սիրոյն իւր վարդի, թողու ողբոց աղաղակ:

Խորշակահար հայ ծաղկանց անդ ի միջի գեղագոյն՝

Փայլէր ծաղիկ բիւրագեղ՝ յարիւն բոսոր վարդագոյն,

Յարփւոյն ճաճանչ սոկենիշ կայր սաղավարդ առ ընթեր,

Չքնաղակերս անդ վահան, նիզակ ամուր և սուսեր:

Դեղապայծառ դիմաց գոյն դեռ ցոլցոլայր քանի զվարդ,

Յանուշ շըմանց նոր ի նոր թուչը ժպիտ տարաբաղդ,

Ննջեր վարդան քաջարի, նիրհներ ի նինջ անուշիկ,

Մինչ Եղիշէն սրաստրով՝ զքայլ էառ անդ յուշիկ:

Յանկարծ ծերունին հայանուէր դողոջոջ ոտից եռ գոլար:

Օհրթ կայծակեան հարուածով տերեն ի յոստ գալիահար,

Երցունք յաշաց ցայտեցին, եկաց ի ծունկ ուշաթափ,

Փայլէր զըկով զիւր վարդիկ, սրտին իւր ջերմատափ:

Վարդիկդ Հայոց, անուշ վարդ, անդ հեկեկաց Եղիշէն,

Հանգինատ քնոյդ երկնագիր, հանգինատ երկին քեղ յիշէն,

Մեղ սուրբ Արօն՝ Հայրենիք յառկայծ կոցցին յետին նիշ,

Եւանդ թողի Հայ որդւոց՝ կալ յԵւարայր մասնանիշ:

Կրանի լուսնակն և արփի յերկինն ի նազ նազեն ջուխա,

Ի Հաւարշան խնկաբեր Հայերն ելցեն սիրոյն յուխա,

Ուր քաջ իսմիից՝ անդ դարձն եկաց աեսիլ շերմաճե,

Ի նազն ի զլուխ Արբասուրբ վարդն ծաղկանց թե ի թե:

Տղմուտ ի ջուր ի յալիս ցորչափ սահի վէտ ի վէտ,

Եփունքն ի սէր Հայրենի ոռոգեսցին ծաղկաւէտ,

Հայեր, դուք անդը փութացէք ի Աելովանն յաւաղան:

Զսիրտ լուալ զհողի՝ թէ չէք պարսկի դաւաճան:

Եղիշէն յողք ու կոծ Աարդանն հանգէր դեռ ի խոր,

Յոր ջերմաջերմ յարտասուս կը կնէր սիրոյն զիւր համբոյք,
“Ենոյշ իմ վարդ, երթ բարեաւ, թող զԵւարայր մեզ ի սուգ,
Զօնիմ վերջին զիմ կարօտ ի քո ձակատ վեհաշուքր,,”

Եյսպէս ողբաց Եղիշէ, այսպէս սգաց գառնագին,
Մինչ զիւր փափաք տայր սիրով ի դիւցազմնց սառ շիրիմ.
Քաղցրիկդ իմ վարդ Հայրենեաց, վարդանման քո արիւն՝
Ի սիրտ Հայոց ջերմավառ միշտ ցողեսցի կենդանւոյն:
Ո՛ւ Շաւարշան, իմ քաջաց ծաղկափթիթ օրօրոց,
Միշտ անմռաց միշտ անմահ ի քո գրկին զրկե և ծոց,
Դու և Տղմուտ ի մեղմ ալիս մինչ ծածանիս գեղածուի,
Պահեա իբեղ Ա արդանայն վարդգեղ արեան կամիլ սուրբ . . :

ԱՐԵԱԿ ՎԱՀԱԽԱԿ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ.

ԹՈՒՆԵԱԿԻՆ ԶՈՒԱԿՈՐՈՅՏ.

Ընդէր տրտում յոստո ծառոց
Նստիս Թռչնակդ սիրասուն.
Ե՛ւ երգակցել սիրուն Թռչնոց,
Երգել զդուրուտ արեւուն:
Կանխէի ես, ասէ Թռչնակն,
Եւ երգէի քաղցր ի ճայն:
Վայելս յոյզւոյն վարդամօտին
Յայս ծաղկածին ծառասուն:
. Զի յայն նուագ ես մայր Եփ
Երից ծաղուց տարիակեաց,
Եւ փութաջան յօրինէի
Զրոյն իմոցն սիրելեաց:
Փողովէի կեր քաղցրահամ,
Եւ զեր նոցա երդէի:
Խսկ զգիշերն համանգաման
Ծածկեալ Թեւօք նաշէի:
Եղանէտք մեր յայգս այդուոն,
Յանձին զիոյթ կալեալ ոչ՝
Ի յայդորել մեծի արփուոյն
Ի նուռուդին բարձրագուլ:
Բայց ո՞հ, անգութ եւ անողորմ
Անագորոյն ձեռն մարդոյն . . .
Յափշտակեաց ի սուրբ գրկէ
Չուն ի նազացս սիրասուն;

Եղնէկ նոցա որրացելոց

Յայն դերութեան ի կալիմ,

Եւ իմ եզրի բիւր յառոց

Յայս ողպի ի թափիմ:

Ո.Ա.Ա.Խ.ՕՏ.

Ահա արեւուն մածանչ բռատիայլ
Գայ բնութեանս ի տես յանուշիկ ի քայլ,
Բաշխել համայնից հրճուանաց զիմակ,
Զարթիր արդ դու իմ մահուկ սիրունակ:
Ահա յեխւէջս երփնագեղ ծաղկանց,
Ի կանանչաթոյր բողբոց դապարեաց,
Պճնելոց ի զարդ ցողիւք փայլ ի փայլ,
Ճուռողեն սիրուն Թռչնակը սիրացեալ:
Ահա մեղանոս ծառոյն արդամիք,
Զարովք քաղցրաշոնչ վարդի զեփիմուկի,
Ի տերեւս վառ վալին զեղաթոյր
Եւ առձայնն զմեզ յիւրեանցն ի համրոյր:
Խսկ այն ծաղկասփիռ առուակն ի կարկաչ,
Ի թաւալ զիոր յանեակն եւ ի յաջ,
Մատուռաւկ լինի բուսոց եւ տնկոց
Պարուցեալ նոցա ի սրօնեալ ի ծոց:
Արգ Ել զեղանի մանուկդ յասպարէզ,
Ճեմել ի հրճուանս ի ծաղկունս ի սէզ,
Զփունցս կազմել, երգել ընդ սոխակ,
Տայ վառս Արարայն, լինել զոնունակ:
Թէֆէւ-
Թարքաւեաց Առաւելէնէւ-
Յ. ԱՐՄԱՆԱԿԱՆԱՑ.